Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Հազար ինը հարյուր վեց ***թվականն էր:*** Կոմիտասը մեկնեց Փարիզ՝ մասնակցելու երգարվեստի համաշխարհային փառատոնին: Նա զօրուգիշեր տքնաջան աշխատում էր՝ ըմբռնելով, որ իր արվեստով օտար ունկնդրին պատկերացում պիտի տա Հայաստանի և հայ ժողովրդի՝ մինչ այդ աշխարհին անծանոթ մշակույթի մասին:

Լէփ-լեցուն է Փարիզի սյունազարդ սրահներից մեկը. շուրջբոլորը ծաղկեփնջեր են, դահլիճում՝ խստապահանջ հանդիսականներ, բեմին՝ մեծահամբավ երաժիշտներ:

Ահա բեմահարթակ դուրս եկավ սևամորուս մի այր՝ երկարաքղանցք սքեմով ու վեղարով, և դահլիճը միանգամից փոթորկվեց. ո՞վ է այդ հոգևորականը, և ի՞նչ է անելու, ***ինչպե՞ս*** կարող է հաղթել համաշխարհային աստղերի մրցույթում: Զսպելով հոգու ալեկոծությունը Կոմիտասը դահլիճի հարցական հայացքի ներքո մոտեցավ ***դաշնամուրին***՝ ներքուստ զգալով թպրտացող սրտի ***թրթիռը:***

Երբ սրահը լցվեց վարդապետի հոգին պարուրող ողողանջներով, դահլիճը համրացավ. մարդկանց թվաց՝ ժամանակը կանգ է առել ու իրենք երկրային ***աշխարհից*** անէացած՝ հայտնվել են տիեզերական անեզրության մեջ:

Այդ օրը Կոմիտասը դարձավ երգի համաշխարհային փառատոնի դափնեկիր:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով թույլ տրված կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:
2. Շարահյուսորեն վերլուծի՛ր տեքստում ընդգծված անդամները:
3. Տեքստից դո՛ւրս գրիր բարդածանցավոր բառերը՝ նշելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով:
4. Տեքստից դո՛ւրս գրիր բառային և քերականական համանուն ունեցող հինգ բառ, կազմի՛ր բառազույգերը և մեկնաբանի՛ր դրանցից յուրաքանչյուրը:
5. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *պարեգոտ, կռուփ, ծխնի, շափյուղա, հորջորջել, երախայրիք:*
6. Կազմի՛ր չորս պարզ նախադասություն **մռայլ** բառի բազմիմաստություններով:
7. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքները. *սիրտ առնել , սիրտը առնել ,սիրտը ելնել սիրտը բացվել:*
8. Մեկնաբանի՛ր տրված հարանուն զույգերը. *երախտիք-երախտագիտություն, հրաձիգ- հրձիգ:*
9. Գրի՛ր շարադրություն՝ «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում: